Ընթացք	<ol style="list-style-type: none"> Ստորաբաժանման աշխատակիցը «Data_IA-03-02_006» տվյալի հիման վրա ձևավորում է տվյալ օրվա թեստավորման մասնակիցների ցանկ («Data_IA-03-03_007» տվյալ), Ստորաբաժանման աշխատակիցը նշված ցանկի հիման վրա կազմակերպում է մասնակիցների մուտքը ՀՀ \$Ն վարչական շենք, դիմավորում է թեստին ներկայացած անձանց և ուղեկցում քննասենյակ, Ստորաբաժանման աշխատակիցը ստուգում է քննասենյակ մուտք գործած անձի անձը հաստատող փաստաթուղթը, այն համեմատում «Data_IA-03-03_007» տվյալի համապատասխան տեղեկատվության հետ և իրականացնում Վալիդացիա, Ստորաբաժանման աշխատակիցը մասնակիցներին ներկայացնում է թեստի անցկացման կարգը, մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև տեղեկացնում է թեստի տևողության և անցողիկ միավորների մասին: Ստորաբաժանման աշխատակիցը թեստ անցկացնելու Էլեկտրոնային համակարգում (Համակարգ 3) գրանցում է յուրաքանչյուր մասնակցին («Data_IA-03-03_008»), հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև թեստավորման հարցաշարը («Data_IA-03-01_004» տվյալ) և համակարգը տվյալ մասնակցի համար ավտոմատ կերպով գեներացնում է Համակարգի օգտագործողի մուտքանուն և գաղտնաբառ («Data_IA-03-03_009» տվյալ), որը աշխատակիցը տպում և փոխանցում է մասնակցին: Մասնակիցը նստում է այդ պահին ազատ ցանկացած համակարգչի մոտ և Էկրանին բացված Համակարգ 3-ի ինտերֆեյսում «Data_IA-03-03_009» տվյալից մուտքագրում է օգտագործողի մուտքանունն ու գաղտնաբառը և սեղմում Սկսել կոճակը, Համակարգ 3-ը յուրաքանչյուր մասնակցի համար ձևավորում է 30 հարցից բաղկացած թեստ և տալիս 60 րոպե ժամանակ՝ հարցերին պատասխանելու համար: Մասնակիցը՝ ընտրելով բոլոր հարցերի իր կարծիքով ճիշտ պատասխանները, ավարտում է թեստը: Թեստն ավարտվում է նաև 60 րոպե ժամանակի լրանալու դեպքում: Քննության ավարտից հետո Համակարգ 3-ը նույն պահին տվյալ մասնակցի համակարգչի Էկրանին արտացոլում է հավաքած միավորները, ինչպես նաև ձևավորում Data_IA-03-03_010 տվյալը և արդյունքները պահպանում բազայում:

10. **Ստորաբաժանման աշխատակիցը** լրացնում է մասնակցի հավաքած միավորները համապատասխան արձանագրության մեջ («Data_IA-03-03_007» տվյալ), և փոխանցում մասնակցին՝ ստորագրելու:
11. **Մասնակիցը** ստորագրում է իր տվյալների դիմաց՝ դրանով հավաստելով, որ տեղեկացված է իր հավաքած միավորների մասին և համաձայն է դրանց հետ: Մասնակիցը դուրս է գալիս քննասենյակից:

Մուտքագրվող տվյալներ

Data_IA-03-03_007

Տվյալ	Նկարագրություն
Թեստին մասնակցելու իրավունք ստացած աուդիտորների ցանկ՝ համապատասխան տվյալներով	Excel Ֆայլ, որը բաղկացած է հետևյալ սյուներից՝ 1-ին սյուն՝ հերթական համար, 2-րդը՝ մասնակցի Անուն, Ազգանուն, Հայրանունը, 3-րդը՝ մասնակցի հանրային ծառայության համարանիշը, 4-րդը՝ մասնակցի հավաքած միավորները, 5-րդը՝ մասնակցի ստորագրությունը:

Data_IA-03-03_008


Տվյալ	Նկարագրություն
Մասնակցի Համակարգ 3-ում գրանցման տվյալ	Թեստի մասնակցի տվյալների լրացման ձևաթուղթ, որտեղ պետք է լրացվի վերջինիս՝ Հանրային ծառայության համարանիշ, Անուն, Ազգանուն, Հայրանունը: Թեստավորման հանձնաժողովի անդամի լրացման ձևաթուղթ, որտեղ պետք է լրացվի վերջինիս՝ պաշտոնը (ընտրվում է կախվող պատուհանից՝ նախագահ կամ անդամ), Անուն, Ազգանուն, Հայրանունը:

Ելքագրվող տվյալներ

Data_IA-03-03_009

Տվյալ	Նկարագրություն
Թեստի մասնակցի օգտագործողի անվան և գաղտնաբառի տվյալ	3 սյունից և 3 տողից բաղկացած Ֆայլ, որում նշված է թեստի մասնակցի մուտքանունը (սա մասնակցի ՀԾՅ-ն է) և


		<p>գաղտնաբառը: Ընդ որում Նշված տվյալը հնարավոր է օգտագործել միայն 1 անգամ և այն վավեր է ակտիվացնելուց հետո 60 րոպե: Նշված ժամանակի լրանալուց կամ թեստն ավարտելուց հետո տվյալն ապաստիվանում է</p>
Data_IA-03-03_010		
Տվյալ		Նկարագրություն
Թեստի արդյունքների ամփոփման տվյալ	<p>Մասնակցի համակարգչի Էկրանին արտացոլում է հավաքած միավորը տոկոսային արտահայտությամբ, ինչպես նաև գեներացնում է հղում, որի միջոցով մասնակիցը կարող է տեսնել թեստի մանրամասները, մասնավորապես Չարցը, ճիշտ պատասխանը, Մասնակցի պատասխանը և մասնակցի ստացած միավորը յուրաքանչյուր հարցից:</p>	
Վալիդացիա	<p>Ստուգվում է թեստին ներկայացած անձի ինքնությունը: Եթե նախապես ներկայացված և փաստացի ներկա անձի և վերջինիս փաստաթղթերի մեջ անհամապատասխանություններ չեն արձանագրվում, ապա անձը ստանում է մասնակցելու իրավունք, հակառակ դեպքում՝ ոչ:</p>	
Դիագրամ		



BP-IA-03-04 ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների վերապատրաստման դասընթացի թեստի արդյունքների ամփոփում և հրապարակում


Ստորաբաժանում	Ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչություն	
Անվանում	BP-IA-03-04 ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների վերապատրաստման դասընթացի թեստի արդյունքների ամփոփում և հրապարակում	
Նպատակ	Ներքին աուդիտի մասին ՀՀ օրենքով սահմանված որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման գործընթացի կազմակերպման նպատակով վերապատրաստման դասընթացի թեստավորման արդյունքների ամփոփում և հրապարակում	
Տիրույթ	Ստորաբաժանում, Էլ. համակարգ 1 (ՀՀ ՖՆ պաշտոնական կայք), Էլ. համակարգ 3 (ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման քննության անցկացման Էլեկտրոնային համակարգ)	
Դերակատարներ	Ստորաբաժանման աշխատակից,	
Բազմընթացք	Ոչ	
Ընթացք	<ol style="list-style-type: none"> Ստորաբաժանման աշխատակիցը BP-IA-03-03 պրոցեսի տեղի ունենալու պարագայում Էլ. համակարգ 3-ից, թեստի անցկացման օրը, գեներացնում է թեստի արդյունքների արձանագրությունը («Data_IA-03-04_011» տվյալ), Ստորաբաժանման աշխատակիցը նույն օրը ամփոփում է թեստի արդյունքները (Data_IA-03-04_012 տվյալ), որը ոչ ուշ, քան թեստավորմանը հաջորդող երկրորդ աշխատանքային օրը հրապարակում է Լիազոր մարմնի պաշտոնական կայքում, Ստորաբաժանման աշխատակիցը թեստավորման նվազագույն անցողիկ շեմը չհաղթահարած անձի (անձանց) տվյալները հեռացնում է ՀՀ ՖՆ պաշտոնական կայքում առկա ՀՀ ՖՆ կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկից (Data_IA-01-06_013 տվյալ) և նոր ցանկը հրապարակում Լիազոր մարմնի պաշտոնական կայքում: 	
Մուտքագրվող տվյալներ	Data_IA-03-04_011	
	Տվյալ	Նկարագրություն
	Քննության արդյունքների արձանագրություն	Աղյուսակի տեսքով ներկայացված են բոլոր մասնակիցների տվյալներն ու միավորները: Առկա է նաև քննության հանձնաժողովի անդամների տվյալները և ստորագրության հատվածները
Ելքագրվող տվյալներ	Data_IA-03-04_012	
	Տվյալ	Նկարագրություն
	Ներքին աուդիտորների թեստավորման արդյունքներ	Excel ֆայլ, որը բաղկացած է հետևյալ սյուներից՝ 1-ին սյուն՝ հերթական համար,

		<p>2-րդը՝ Կազմակերպության անվանումը, 3-րդը՝ Վերապատրաստված ներքին աուդիտորի Անուն, Ազգանուն, Յայրանունը, 4-րդը՝ Թեստավորման ամիս, ամսաթիվը, 5-րդը՝ Թեստավորման ժամը, 6-րդը՝ Թեստավորման արդյունքը:</p>
Data_IA-03-04_013		
Տվյալ		Նկարագրություն
<p>ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկ</p>	<p>Վերանայվում է Data_IA- 01-06_021 տվյալը: Ներկայացված են այն բոլոր անձանց տվյալները, որոնք տվյալ պահի դրությամբ ունեն ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում: Մասնավորապես առկա է անուն ազգանուն հայրանունը և որակավորման ամսաթիվը:</p>	
Վալիդացիա		
Դիագրամ		



BP-IA-03-05 ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների վերապատրաստման անցկացումը ներքին աուդիտի ոլորտին վերաբերող այլ դասընթաց(ներ)ի միջոցով


Ստորաբաժանում	Ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչություն					
Անվանում	BP-IA-03-05 ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների վերապատրաստման անցկացումը ներքին աուդիտի ոլորտին վերաբերող այլ դասընթաց(ներ)ի միջոցով					
Նպատակ	Ներքին աուդիտի մասին ՀՀ օրենքով սահմանված որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման գործընթացի կազմակերպման նպատակով վերապատրաստման կազմակերպում ներքին աուդիտի ոլորտին վերաբերող այլ դասընթացի մասնակցության միջոցով					
Տիրույթ	ՀՀ ֆինանսների նախարարություն, Ստորաբաժանում, Ներքին աուդիտոր					
Դերակատարներ	Ներքին աուդիտոր, Ստորաբաժանման աշխատակից,					
Բազմընթացք	Ոչ					
Ընթացք	<ol style="list-style-type: none"> Ներքին աուդիտորը Լիազոր մարմին է ներկայացնում դիմում և հայտնում որ իր վերապատրաստումն իրականացրել է ներքին աուդիտի ոլորտին վերաբերող այլ միջոցառումներին մասնակցելու միջոցով` կցելով այդ մասին վկայող փաստաթղթերը, Ստորաբաժանման աշխատակիցն ուսումնասիրում է դիմումը և կից նյութերը: Իրականացվում է Վալիդացիա: Ստորաբաժանման աշխատակիցը ներքին աուդիտորին ընդգրկում է թեստավորման ժամանակացույցի համապատասխան ցանկում («Data_IA-03-02_006» տվյալ): Այս քայլից սկսած գործընթացն իրականանում է BP-IA-03-03 և BP-IA-03-04 ենթագործառույթներում նկարագրվածի պես: 					
Մուտքագրվող տվյալներ	<table border="1"> <thead> <tr> <th>Տվյալ</th> <th>Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td> </td> <td> </td> </tr> </tbody> </table>		Տվյալ	Նկարագրություն		
Տվյալ	Նկարագրություն					
Ելքագրվող տվյալներ	<table border="1"> <thead> <tr> <th>Տվյալ</th> <th>Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td> </td> <td> </td> </tr> </tbody> </table>		Տվյալ	Նկարագրություն		
Տվյալ	Նկարագրություն					
Վալիդացիա	Եթե դիմումատուի ներկայացրած նյութերը Լիազոր մարմնի կողմից գնահատվում են ընդունելի, ապա աուդիտորը ազատվում է վերապատրաստման ամբողջական դասընթացից կամ շարունակական մասնագիտական վերապատրաստման համարժեք ժամերից: Եթե դիմումատուի ներկայացրած նյութերը Լիազոր մարմնի կողմից գնահատվում են ոչ բավարար շարունակական մասնագիտական վերապատրաստման դասերից ազատելու համար, ապա աուդիտորը այդ մասին տեղեկացվում է:					



BP-IA-04-01 Ներքին աուդիտի համակարգի մասին նախորդ տարվա հաշվետվության կազմում և հրապարակում

Ստորաբաժանում	Ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչություն							
Անվանում	BP-IA-04-01 Ներքին աուդիտի համակարգի մասին նախորդ տարվա հաշվետվության կազմում և հրապարակում							
Նպատակ	Ներքին աուդիտի մասին ՀՀ օրենքով սահմանված Ներքին աուդիտի համակարգի մասին նախորդ տարվա հաշվետվության հրապարակում							
Տիրույթ	Ներքին աուդիտի մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ստորաբաժանում կամ աշխատակից, էլ. համակարգ 1 (ՀՀ \$Ն պաշտոնական կայք), ՀՀ հանրային հատվածի կազմակերպություն, ՀՀ ֆինանսների նախարար							
Դերակատարներ	Նախարար, Ստորաբաժանման աշխատակից, ՀՀ հանրային հատվածի կազմակերպություն							
Բազմընթացք	Ոչ							
Ընթացք	<ol style="list-style-type: none"> ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ՀՀ \$Ն Է ներկայացնում համապատասխան տարեկան հաշվետվություն, որում ամփոփվում է ներքին աուդիտի շրջանակում նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքը: Հաշվետվության հետ ներկայացնում է նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք սահմանված են ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ N 143-Ն հրամանի հավելվածի 306-313 կետերով («Data_IA-04-01_001» տվյալ): Ստորաբաժանման աշխատակիցը ստանում է հաշվետվությունները և սկսում է ուսումնասիրման գործընթացը: Իրականացվում է Վալիդացիա: Ստորաբաժանումը ամփոփում է ներկայացված հաշվետվությունների տվյալները, վերլուծում դրանք և կազմում Ներքին աուդիտի համակարգի մասին նախորդ տարվա հաշվետվության վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագիծը («Data_IA-04-01_002» տվյալ), Ստորաբաժանումը նախագիծը ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարին՝ հաստատման: Նախարարը հաստատում է հաշվետվությունը («Data_IA-04-01_003» տվյալ) և այն վերադարձնում Ստորաբաժանում: Ստորաբաժանումը այն գրությամբ տրամադրում է ՀՀ \$Ն համապատասխան ստորաբաժանմանը՝ ՀՀ \$Ն պաշտոնական կայքում մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը հրապարակելու: 							
Մուտքագրվող տվյալներ	<table border="1"> <tr> <td colspan="2">Data_IA-04-01_001</td> </tr> <tr> <td style="text-align: center;">Տվյալ</td> <td style="text-align: center;">Նկարագրություն</td> </tr> <tr> <td>ՀՀ հանրային հատվածի կազմակերպության ներքին աուդիտի գործունեության տարեկան ամփոփ հաշվետվություն՝ կից նյութերով</td> <td>համապատասխան տարեկան հաշվետվություն, որում ամփոփվում է կազմակերպության ներքին աուդիտի շրջանակում նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքը: Հաշվետվության հետ ներկայացնում է նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք</td> </tr> </table>		Data_IA-04-01_001		Տվյալ	Նկարագրություն	ՀՀ հանրային հատվածի կազմակերպության ներքին աուդիտի գործունեության տարեկան ամփոփ հաշվետվություն՝ կից նյութերով	համապատասխան տարեկան հաշվետվություն, որում ամփոփվում է կազմակերպության ներքին աուդիտի շրջանակում նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքը: Հաշվետվության հետ ներկայացնում է նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք
Data_IA-04-01_001								
Տվյալ	Նկարագրություն							
ՀՀ հանրային հատվածի կազմակերպության ներքին աուդիտի գործունեության տարեկան ամփոփ հաշվետվություն՝ կից նյութերով	համապատասխան տարեկան հաշվետվություն, որում ամփոփվում է կազմակերպության ներքին աուդիտի շրջանակում նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքը: Հաշվետվության հետ ներկայացնում է նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք							


		սահմանված են ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ N 143-Ն հրամանի հավելվածի 306-313 կետերով
Ելքագրվող տվյալներ	Data_IA-04-01_002	
	Տվյալ	Նկարագրություն
	ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագիծ	Ներքին աուդիտի համակարգի մասին նախորդ տարվա հաշվետվության ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագիծ
	Data_IA-04-01_003	
Տվյալ	Նկարագրություն	
ՀՀ ֆինանսների նախարարի հրաման	ՀՀ ֆինանսների նախարարի հրաման՝ Ներքին աուդիտի համակարգի մասին նախորդ տարվա հաշվետվության մասին	
Վալիդացիա	Ստուգվում է Հաշվետվությունը և դրան կից փաստաթղթերը և եթե առկա են լինում անհամապատասխանություններ կամ թերի փաստաթղթեր, կամ առաջանում է լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտություն, ապա տվյալ կազմակերպությունը այդ մասին տեղեկացվում է: Վալիդացիայի ժամանակ նաև վեր են հանվում այն կազմակերպությունները, որոնք մինչև սահմանված ժամկետը հաշվետվություն չեն ներկայացրել, և այդ կազմակերպություններին այդ մասին ևս տեղեկացվում է՝ խնդրելով կազմակերպել հաշվետվությունների ներկայացման գործընթացը:	
Դիագրամ		



BP-IA-06-01 Ներքին աուդիտի միջավայրի կազմում

Ստորաբաժանում	Ներքին աուդիտի ստորաբաժանում կամ արտապատվիրակված ծառայություն (այսուհետ՝ ներքին աուդիտ)							
Անվանում	BP-IA-06-01 Ներքին աուդիտի միջավայրի կազմում							
Նպատակ	Ներքին աուդիտ իրականացնելու համար ներքին աուդիտի միջավայրի ձևավորում							
Տիրույթ	Ներքին աուդիտի ստորաբաժանում կամ ներքին աուդիտ իրականացնող(ներ), Ներքին աուդիտի ենթակա կազմակերպության այլ ստորաբաժանումներ							
Դերակատարներ	Ներքին աուդիտոր, Կազմակերպության այլ ստորաբաժանում							
Բազմընթացք	Ոչ							
Ընթացք	<ol style="list-style-type: none"> Ներքին աուդիտորը՝ Կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի նույնականացման նպատակով, հավաքագրում է Կազմակերպությանը վերաբերող ամբողջական տեղեկատվություն՝ կանոնադրություն, ռազմավարություններ, ոլորտի վերաբերյալ իրավական ակտեր և այլն («Data_IA-06-01_001» տվյալ): Ներքին աուդիտորն ուսումնասիրում է հավաքագրած տեղեկատվությունը: Ներքին աուդիտորը սահմանում է Կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառնությունները և դրանց նկարագրությունները (առկայության դեպքում): Կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի տարրերի և գործառնությունների սահմանման համար կիրառվում է երեք մեթոդ՝ ուղղահայաց, հորիզոնական և համակցված: Նշված մեթոդները ներքին աուդիտորի կողմից կիրառվում են հաջորդաբար, քանի որ միայն այդպես է հնարավոր նախանշել Կազմակերպության բոլոր գործառնությունները: Ներքին աուդիտորը Կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը տրոհում է մինչև գործառնության կամ գործընթացի մակարդակ: Ներքին աուդիտորն իրականացնում է գործառնությունների կամ գործընթացների ըստ կարևորության դասակարգում՝ ելնելով աուդիտի համար հետաքրքրություն ներկայացնելու սկզբունքից: Ներքին աուդիտորը հետամուտ է լինում գործառնությունների համար պատասխանատուների կողմից գործառնությունների, ենթագործառնությունների և ընթացակարգերի նկարագրման և պատկերման ընթացքին (սա վերաբերում է նաև պարբերական թարմացումներին): Ներքին աուդիտորն ամփոփում և վերլուծում է ստացված նկարագրերը, կազմում ներքին աուդիտի միջավայրը («Data_IA-06-01_002» տվյալ): Նշված գործընթացի մանրամասն նկարագիրը ներկայացված է ՀՀ ֆինանսների նախարարի 30/11/2012թ N 1050-Ն հրամանում: 							
Մուտքագրվող տվյալներ	<table border="1"> <tr> <td colspan="2">Data_IA-06-01_001</td> </tr> <tr> <td>Տվյալ</td> <td>Նկարագրություն</td> </tr> <tr> <td>Կազմակերպությանը վերաբերող տվյալներ</td> <td>Ներքին աուդիտորը, աուդիտի միջավայրի մասին պատկերացում կազմելու նպատակով հավաքագրում է Կազմակերպությանը վերաբերող ամբողջական տեղեկատվություն՝</td> </tr> </table>		Data_IA-06-01_001		Տվյալ	Նկարագրություն	Կազմակերպությանը վերաբերող տվյալներ	Ներքին աուդիտորը, աուդիտի միջավայրի մասին պատկերացում կազմելու նպատակով հավաքագրում է Կազմակերպությանը վերաբերող ամբողջական տեղեկատվություն՝
Data_IA-06-01_001								
Տվյալ	Նկարագրություն							
Կազմակերպությանը վերաբերող տվյալներ	Ներքին աուդիտորը, աուդիտի միջավայրի մասին պատկերացում կազմելու նպատակով հավաքագրում է Կազմակերպությանը վերաբերող ամբողջական տեղեկատվություն՝							


		Կանոնադրություն, ռազմավարություններ, ոլորտի վերաբերյալ իրավական ակտեր և այլն:
Ելքագրվող տվյալներ	Data_IA-06-01_002	
	Տվյալ	Նկարագրություն
	Ներքին աուդիտի միջավայր	Փաստաթուղթ, որտեղ ներքին աուդիտորը ներկայացնում է Կազմակերպության կառուցվածքը, բոլոր գործառույթները, դրանց իրականացման պատասխանատուներին, ինչպես նաև դասակարգում է այդ գործընթացներն ըստ ներքին աուդիտի համար կարևորության աստիճանի:
Վալիդացիա		
Դիագրամ		



BP-IA-07-01 Կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրում

Ստորաբաժանում	Ներքին աուդիտի ստորաբաժանում կամ արտապատվիրակված ծառայություն (այսուհետ՝ ներքին աուդիտ)					
Անվանում	BP-IA-07-01 Կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրում					
Նպատակ	Ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի կազմման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ձևավորում					
Տիրույթ	ՀՀ հանրային հատվածի կազմակերպություն,					
Դերակատարներ	Ներքին աուդիտոր					
Բազմընթացք	Ոչ					
Ընթացք	<ol style="list-style-type: none"> Ներքին աուդիտորն իրականացնում է Կազմակերպության ներքին միջավայրի և նրա վրա ազդող արտաքին միջավայրի գործոնների ուսումնասիրություն: Ուսումնասիրության իրականացման նպատակով ներքին աուդիտորները օգտվում են կազմակերպությանը վերաբերող ռազմավարական ծրագրերից, կազմակերպության գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունից, կազմակերպության տարեկան և հեռանկարային բյուջետային հայտերը կազմելու հիմք հանդիսացող հաշվարկներից և այլ տեղեկատվական աղբյուրներից («Data_IA-07-01_001» տվյալ): Ներքին աուդիտորը նշված փաստաթղթերից առանձնացնում է այն միջոցառումները, որոնք առաջիկայում նախանշվել են որպես կազմակերպության հիմնական խնդիրներ և նպատակներ: Ներքին աուդիտորը կազմում է կազմակերպության նպատակների իրագործման համար անհրաժեշտ աշխատանքների ու դրանց կատարման համար պատասխանատուների ցանկը: Ներքին աուդիտորը սահմանում է աուդիտի միջավայրը՝ հիմք ընդունելով նախորդ կետում նշված ցանկը: Ընդ որում Կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրման նպատակով, կարելի է նաև օգտագործել կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրման տարբեր մեթոդներ (PEST, SWOT և այլ), որոնք հնարավորություն կտան հենց այս փուլից տիրապետել կազմակերպության հիմնական գործընթացներին, ինչպիսիք են ռիսկերի կառավարումը, պետական հիմնարկների նախահաշիվների կազմումը և, հետագայում, փաստացի տվյալների հետ համեմատման գործընթացները և այլն («Data_IA-07-01_002» տվյալ): 					
Մուտքագրվող տվյալներ	<p>Data_IA-07-01_001</p> <table border="1"> <thead> <tr> <th>Տվյալ</th> <th>Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Կազմակերպությանը վերաբերող տվյալներ</td> <td>Աուդիտի միջավայրի մասին պատկերացում կազմելու նպատակով ներքին աուդիտորները օգտվում են կազմակերպությանը վերաբերող ռազմավարական ծրագրերից, կազմակերպության գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունից, կազմակերպության տարեկան և հեռանկարային բյուջետային հայտերը կազմելու համար հիմք հանդիսացող հաշվարկներից և այլ տեղեկատվական աղբյուրներից</td> </tr> </tbody> </table>		Տվյալ	Նկարագրություն	Կազմակերպությանը վերաբերող տվյալներ	Աուդիտի միջավայրի մասին պատկերացում կազմելու նպատակով ներքին աուդիտորները օգտվում են կազմակերպությանը վերաբերող ռազմավարական ծրագրերից, կազմակերպության գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունից, կազմակերպության տարեկան և հեռանկարային բյուջետային հայտերը կազմելու համար հիմք հանդիսացող հաշվարկներից և այլ տեղեկատվական աղբյուրներից
Տվյալ	Նկարագրություն					
Կազմակերպությանը վերաբերող տվյալներ	Աուդիտի միջավայրի մասին պատկերացում կազմելու նպատակով ներքին աուդիտորները օգտվում են կազմակերպությանը վերաբերող ռազմավարական ծրագրերից, կազմակերպության գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունից, կազմակերպության տարեկան և հեռանկարային բյուջետային հայտերը կազմելու համար հիմք հանդիսացող հաշվարկներից և այլ տեղեկատվական աղբյուրներից					


Ելքագրվող տվյալներ	Data_IA-07-01_002	
	Տվյալ	Նկարագրություն
	Ներքին աուդիտի միջավայր	Փաստաթուղթ, որտեղ ներքին աուդիտորը ներկայացնում է Կազմակերպության կառուցվածքը, բոլոր գործառույթները, դրանց իրականացման պատասխանատուներին, ինչպես նաև դասակարգում է այդ գործընթացներն ըստ ներքին աուդիտի համար կարևորության աստիճանի: Ներկայացվում է նաև Կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրման նպատակով կիրառված մեթոդ(ներ)ը և դրանց միջոցով ստացված արդյունքների հիման վրա կայացրած եզրահանգումները:
Վալիդացիա		
Դիագրամ		



BP-IA-07-02 Կազմակերպության հիմնական ուսումնասիրման ենթակա միավորների նախանշում և ընդհանուր հսկողության միջավայրի գնահատում

Ստորաբաժանում	Ներքին աուդիտի ստորաբաժանում կամ արտապատվիրակված ծառայություն (այսուհետ՝ ներքին աուդիտ)							
Անվանում	BP-IA-07-02 Կազմակերպության հիմնական ուսումնասիրման ենթակա միավորների նախանշում և ընդհանուր հսկողության միջավայրի գնահատում							
Նպատակ	Նախանշել Կազմակերպության նպատակները և գնահատել ընդհանուր հսկողության միջավայրը							
Տիրույթ	ՀՀ հանրային հատվածի կազմակերպություն							
Դերակատարներ	Ներքին աուդիտոր, ՀՀ հանրային հատվածի կազմակերպության այլ ստորաբաժանումներ							
Բազմընթացք	Ոչ							
Ընթացք	<ol style="list-style-type: none"> Ներքին աուդիտորը դիտարկում է Կազմակերպության բոլոր նպատակները՝ Կազմակերպության միավորների նախանշման նպատակով: Ներքին աուդիտորը դիտարկում է Կազմակերպության նպատակների իրագործմանն ուղղված գործունեությունն ծավալող միավորները: Ներքին աուդիտորը Կազմակերպության բոլոր ստորաբաժանումներից և այլ ծրագրեր իրականացնող միավորներից պահանջում է վերջիններիս գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրությունները: Ներքին աուդիտորը Կազմակերպության բոլոր ստորաբաժանումներից և այլ ծրագրեր իրականացնող միավորներից ստանում է վերջիններիս գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրությունները (տվյալ Data_IA- 07-02_003): Ներքին աուդիտորը ուսումնասիրում է Կազմակերպության բոլոր ստորաբաժանումներից և այլ ծրագրեր իրականացնող միավորներից ստացված վերջիններիս գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրությունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով այն միավորներին, որոնք անդրադառնում են մեկից ավելի նպատակներին, որոնց մի մասը կարող է ուղղված լինել որևէ մի նպատակի մասնակի իրագործմանը: Ներքին աուդիտորը դիտարկում և գնահատում է Կազմակերպության հսկողական գործընթացները: Ներքին աուդիտորը նախանշում է աուդիտի միջավայրը՝ օգտագործելով նաև կազմակերպության հսկողական գործընթացները և դրանց հստակ սահմանումը: Ներքին աուդիտորը կազմում է կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը: Ներքին աուդիտորը Կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ քննարկման արդյունքում լրացնում է ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը (տվյալ Data_IA- 07-02_004): 							
Մուտքագրվող տվյալներ	<table border="1"> <tr> <td colspan="2">Data_IA- 07-02_003</td> </tr> <tr> <td>Տվյալ</td> <td>Նկարագրություն</td> </tr> <tr> <td>Գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրություն</td> <td>Կազմակերպության բոլոր ստորաբաժանումների և այլ ծրագրեր իրականացնող միավորների կողմից վերջիններիս գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրություններ: Սրանք կարող են ներկայացված լինել նաև գծապատկերների միջոցով:</td> </tr> </table>		Data_IA- 07-02_003		Տվյալ	Նկարագրություն	Գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրություն	Կազմակերպության բոլոր ստորաբաժանումների և այլ ծրագրեր իրականացնող միավորների կողմից վերջիններիս գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրություններ: Սրանք կարող են ներկայացված լինել նաև գծապատկերների միջոցով:
Data_IA- 07-02_003								
Տվյալ	Նկարագրություն							
Գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրություն	Կազմակերպության բոլոր ստորաբաժանումների և այլ ծրագրեր իրականացնող միավորների կողմից վերջիններիս գործառնությունների և ենթագործառնությունների նկարագրություններ: Սրանք կարող են ներկայացված լինել նաև գծապատկերների միջոցով:							

Ելքագրվող տվյալներ	<p>Data_IA- 07-02_004</p> <table border="1" data-bbox="427 244 2175 850"> <thead> <tr> <th data-bbox="427 244 1301 304">Տվյալ</th> <th data-bbox="1301 244 2175 304">Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="427 304 1301 850"> <p>Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթ</p> </td> <td data-bbox="1301 304 2175 850"> <p>Ստուգաթերթը նախատեսված է Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրը գնահատելու, դրա ռիսկայնության աստիճանը որոշելու համար: Այս ցուցանիշը հետագայում հնարավորություն կտա աուդիտորական կոնկրետ առաջադրանքների իրականացման ժամանակ կատարել ճիշտ ընտրանքներ: Այս ստուգաթերթը պետք է լրացվի յուրաքանչյուր տարվա համար, սակայն բացի առաջին տարվանից, հաջորդ տարիների ընթացքում կարիք չի լինի այն ամբողջովին լրացնել: Հարկավոր կլինի միայն կատարել անհրաժեշտ թարմացումներ: Ստուգաթերթում «ոչ» պատասխանները ավելացնում են կազմակերպության հսկողության միջավայրի ռիսկայնության աստիճանը: Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթի օրինակելի ձևաչափը ներկայացնած է ՀՀ Ֆինանսների նախարարի 17.02.2012թ N 143-Ն հրամանով հաստատված ուղեցույցի 3-րդ հավելվածում:</p> </td> </tr> </tbody> </table>	Տվյալ	Նկարագրություն	<p>Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթ</p>	<p>Ստուգաթերթը նախատեսված է Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրը գնահատելու, դրա ռիսկայնության աստիճանը որոշելու համար: Այս ցուցանիշը հետագայում հնարավորություն կտա աուդիտորական կոնկրետ առաջադրանքների իրականացման ժամանակ կատարել ճիշտ ընտրանքներ: Այս ստուգաթերթը պետք է լրացվի յուրաքանչյուր տարվա համար, սակայն բացի առաջին տարվանից, հաջորդ տարիների ընթացքում կարիք չի լինի այն ամբողջովին լրացնել: Հարկավոր կլինի միայն կատարել անհրաժեշտ թարմացումներ: Ստուգաթերթում «ոչ» պատասխանները ավելացնում են կազմակերպության հսկողության միջավայրի ռիսկայնության աստիճանը: Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթի օրինակելի ձևաչափը ներկայացնած է ՀՀ Ֆինանսների նախարարի 17.02.2012թ N 143-Ն հրամանով հաստատված ուղեցույցի 3-րդ հավելվածում:</p>
Տվյալ	Նկարագրություն				
<p>Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթ</p>	<p>Ստուգաթերթը նախատեսված է Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրը գնահատելու, դրա ռիսկայնության աստիճանը որոշելու համար: Այս ցուցանիշը հետագայում հնարավորություն կտա աուդիտորական կոնկրետ առաջադրանքների իրականացման ժամանակ կատարել ճիշտ ընտրանքներ: Այս ստուգաթերթը պետք է լրացվի յուրաքանչյուր տարվա համար, սակայն բացի առաջին տարվանից, հաջորդ տարիների ընթացքում կարիք չի լինի այն ամբողջովին լրացնել: Հարկավոր կլինի միայն կատարել անհրաժեշտ թարմացումներ: Ստուգաթերթում «ոչ» պատասխանները ավելացնում են կազմակերպության հսկողության միջավայրի ռիսկայնության աստիճանը: Կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթի օրինակելի ձևաչափը ներկայացնած է ՀՀ Ֆինանսների նախարարի 17.02.2012թ N 143-Ն հրամանով հաստատված ուղեցույցի 3-րդ հավելվածում:</p>				
Վալիդացիա					
Դիագրամ					



BP-IA-07-03 Ռիսկերի գնահատում

Ստորաբաժանում	Ներքին աուդիտի ստորաբաժանում կամ արտապատվիրակված ծառայություն (այսուհետ՝ ներքին աուդիտ)
Անվանում	BP-IA-07-03 Ռիսկերի գնահատում
Նպատակ	Ռիսկերի վրա հիմնված ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի կազմում
Տիրույթ	ՀՀ հանրային հատվածի կազմակերպություն
Դերակատարներ	Ներքին աուդիտոր, ՀՀ հանրային հատվածի կազմակերպության այլ ստորաբաժանումներ
Բազմընթացք	Ոչ

Ընթացք	<ol style="list-style-type: none"> 1. Ներքին աուդիտորը ընդհանուր հսկողության միջավայրի լրացված ստուգաթերթի հիման վրա որոշում է կազմակերպության հսկողության միջավայրի ռիսկայնության աստիճանը: 2. Ներքին աուդիտորը առանձնացնում է ներքին աուդիտի տեսանկյունից ավելի առանցքային նշանակություն ունեցող միավորները: 3. Ներքին աուդիտորը նախանշված միավորների համար որոշում է ռիսկի ցուցանիշները, որոնց հիման վրա սահմանում է յուրաքանչյուր միավորում ներքին աուդիտի աշխատանքների իրականացման հաճախականությունը, ծավալները և խորությունը: 4. Ներքին աուդիտորը սահմանում է աուդիտների առաջնահերթությունը և հաճախականությունը: 5. Ներքին աուդիտորը կազմում է ռիսկերի գնահատման տեղեկագրի ձևաթուղթը և այն տրամադրում աուդիտի ենթակա միավորներին՝ լրացնելու և հետ ուղարկելու նպատակով (տվյալ Data_IA- 07-03_005): 6. Աուդիտի ենթակա միավորները ներքին աուդիտին են ներկայացնում իրենց կողմից կազմված (լրացված) ռիսկերի գնահատման տեղեկագիրը (տվյալ Data_IA- 07-03_006):
---------------	--


Մուտքագրվող տվյալներ	Data_IA- 07-03_006			
	<table border="1"> <thead> <tr> <th data-bbox="409 475 1301 534">Տվյալ</th> <th data-bbox="1301 475 2190 534">Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="409 534 1301 933">Ռիսկերի գնահատման տեղեկագիր</td> <td data-bbox="1301 534 2190 933"> <p>Աուդիտի ենթակա յուրաքանչյուր միավորի կողմից լրացված փաստաթուղթ, ներկայացված են իրականացվող գործառնությունները և տրված է դրանց գնահատականը ռիսկայնության 2 մակարդակում՝</p> <ul style="list-style-type: none"> • ռիսկի առաջացման հավանականության, • ռիսկի ազդեցության գնահատական: <p>Ռիսկերի գնահատականը տրված է 1-ից 4 թվային մեծությամբ (1-ը համապատասխանում է ցածր ռիսկին, իսկ 4-ը՝ բարձր): Յուրաքանչյուր ռիսկի համար հաշվարկված է նաև միջին թվաբանական արժեքը՝ հավանականությունը և ազդեցությունը գնահատելուց հետո:</p> </td> </tr> </tbody> </table>	Տվյալ	Նկարագրություն	Ռիսկերի գնահատման տեղեկագիր
Տվյալ	Նկարագրություն			
Ռիսկերի գնահատման տեղեկագիր	<p>Աուդիտի ենթակա յուրաքանչյուր միավորի կողմից լրացված փաստաթուղթ, ներկայացված են իրականացվող գործառնությունները և տրված է դրանց գնահատականը ռիսկայնության 2 մակարդակում՝</p> <ul style="list-style-type: none"> • ռիսկի առաջացման հավանականության, • ռիսկի ազդեցության գնահատական: <p>Ռիսկերի գնահատականը տրված է 1-ից 4 թվային մեծությամբ (1-ը համապատասխանում է ցածր ռիսկին, իսկ 4-ը՝ բարձր): Յուրաքանչյուր ռիսկի համար հաշվարկված է նաև միջին թվաբանական արժեքը՝ հավանականությունը և ազդեցությունը գնահատելուց հետո:</p>			

Ելքագրվող տվյալներ	Data_IA- 07-03_005			
	<table border="1"> <thead> <tr> <th data-bbox="409 983 1301 1042">Տվյալ</th> <th data-bbox="1301 983 2190 1042">Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="409 1042 1301 1407">Ռիսկերի գնահատման տեղեկագրի ձևաթուղթ</td> <td data-bbox="1301 1042 2190 1407"> <p>Աուդիտի ենթակա յուրաքանչյուր միավորի կողմից լրացման ենթակա ձևաթուղթ: Ձևաթղթում աուդիտի ենթակա միավորները պետք է նկարագրեն իրենց կողմից իրականացվող գործառնությունները և դրանք գնահատեն ռիսկայնության 2 մակարդակում՝</p> <ul style="list-style-type: none"> • ռիսկի առաջացման հավանականության, • ռիսկի ազդեցության գնահատական: <p>Տեղեկագրում ռիսկերի գնահատականը տրվում է 1-ից 4 թվային մեծությամբ (1-ը համապատասխանում է ցածր ռիսկին, իսկ 4-ը՝ բարձր):</p> </td> </tr> </tbody> </table>	Տվյալ	Նկարագրություն	Ռիսկերի գնահատման տեղեկագրի ձևաթուղթ
Տվյալ	Նկարագրություն			
Ռիսկերի գնահատման տեղեկագրի ձևաթուղթ	<p>Աուդիտի ենթակա յուրաքանչյուր միավորի կողմից լրացման ենթակա ձևաթուղթ: Ձևաթղթում աուդիտի ենթակա միավորները պետք է նկարագրեն իրենց կողմից իրականացվող գործառնությունները և դրանք գնահատեն ռիսկայնության 2 մակարդակում՝</p> <ul style="list-style-type: none"> • ռիսկի առաջացման հավանականության, • ռիսկի ազդեցության գնահատական: <p>Տեղեկագրում ռիսկերի գնահատականը տրվում է 1-ից 4 թվային մեծությամբ (1-ը համապատասխանում է ցածր ռիսկին, իսկ 4-ը՝ բարձր):</p>			

		Յուրաքանչյուր ռիսկի համար հավանականությունը և ազդեցությունը գնահատելուց հետո պետք է հաշվարկվի նաև միջին թվաբանական արժեքը:
--	--	--

Վալիդացիա

Դիագրամ



BP-IA-07-04 Ռիսկի չափորոշիչների և դրանց ուղղիչ գործակիցների սահմանում

Ստորաբաժանում	Ներքին աուդիտի ստորաբաժանում կամ արտապատվիրակված ծառայություն (այսուհետ՝ ներքին աուդիտ)	
Անվանում	BP-IA-07-04 Ռիսկի չափորոշիչների և դրանց ուղղիչ գործակիցների սահմանում	
Նպատակ	Ռազմավարական ծրագրի կազմման համար ռիսկերի գնահատում և առաջնահերթությունների սահմանում	
Տիրույթ	ՀՀ հանրային հատվածի կազմակերպություն	
Դերակատարներ	Ներքին աուդիտ	
Բազմընթացք	Ոչ	
Ընթացք	<ol style="list-style-type: none"> Ներքին աուդիտորը սահմանում է ռիսկերի վերլուծության ընթացքում կիրառվող չափորոշիչները (այսուհետ՝ ռիսկի չափորոշիչներ), դրանց քանակը, հաշվարկման և կիրառման եղանակը (տվյալ Data_IA- 07-04_007): Ներքին աուդիտորը, սահմանելով յուրաքանչյուր չափորոշիչի գործակիցը՝ ներքին աուդիտորի կողմից հաշվարկում է յուրաքանչյուր միավորի ռիսկի երկու ցուցանիշները (ռիսկի հավանականության ցուցանիշ և ռիսկի ազդեցության ցուցանիշ)՝ բազմապատկելով չափորոշիչները համապատասխանաբար ռիսկի հավանականության կամ ռիսկի ազդեցության ցուցանիշների հետ: Ներքին աուդիտորը ամփոփում և խմբավորում է ռիսկի հավանականության և ռիսկի ազդեցության կշռված ցուցանիշները ռիսկի աստիճանի որոշման միջակայքերում (տվյալ Data_IA- 07-04_008): Ներքին աուդիտորը՝ խմբավորելով ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշները՝ ստանում է համապատասխան ռիսկերի աստիճանները: Ներքին աուդիտորը ռիսկի աստիճանները տեղադրում է համապատասխան մատրիցայում (տվյալ Data_IA- 07-04_009)՝ ստանալով Ռիսկի խմբի թվային արժեքը: Ներքին աուդիտորը ռիսկի խմբի թվային արժեքի հիման վրա, օգտագործելով ռիսկի խմբի դասակարգիչը (տվյալ Data_IA- 07-04_010), որոշում է աուդիտի յուրաքանչյուր միավորի ռիսկի խումբը և խմբավորում տվյալները, կազմում ցուցակ: Ներքին աուդիտորը, ելնելով առկա ռեսուրսների մակարդակից, ընտրում է աուդիտի ենթարկվող միավորները՝ համապատասխան համամասնությամբ (տվյալ Data_IA- 07-04_011): Ներքին աուդիտորը զգայուն, միջին և ցածր ռիսկային խմբերում գտնվող միավորների միջև ընտրություն կատարելու, ինչպես նաև ռեսուրսների սահմանափակության դեպքում առաջնահերթությունները որոշելու համար օգտագործում է ռիսկի ցուցանիշի աճման կամ նվազման միտումը (տվյալ Data_IA- 07-04_012): Ներքին աուդիտորը միևնույն ռիսկային խմբում ընդգրկված միավորների առաջնահերթության գործակիցները համեմատում է միմյանց հետ և, կախված առաջնահերթության գործակցի արժեքից, որոշում այն միավորները, որոնք ստանում են առաջնահերթություն մյուսների համեմատ (ավելի բարձր առաջնահերթության գործակից ունեցող միավորներին տրվում է առաջնայնություն): 	
Մուտքագրվող տվյալներ	Data_IA- 07-04_007	
	Տվյալ	Նկարագրություն

Ռիսկերի չափորոշիչներ

Ռիսկերի վերլուծության ժամանակ օգտագործվող ռիսկերի չափորոշիչների ընտրության օրինակը ներկայացված է ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ N 143-Ն հրամանով հաստատված ուղեցույցի 5-րդ հավելվածում, սակայն ներկայացված չափորոշիչներից մեկը կրում է պարտադիր բնույթ, իսկ մնացածը՝ ընտրանքային: Պարտադիր բնույթ է կրում նախորդ տարվա ընտրանքի արդյունքների հիման վրա կիրառվող չափորոշիչն իրեն տրված ուղղիչ գործակցի հաստատուն արժեքների հետ մեկտեղ, որոնք պետք է օգտագործվեն բոլոր կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից: Բացի դրանից չափորոշիչները տարբերակվում են կախված չափորոշիչներին տրված ուղղիչ գործակիցների արժեքների բնույթից: Գոյություն ունեն հաստատուն և փոփոխուն արժեք ունեցող ուղղիչ գործակիցներով չափորոշիչներ: Հաստատուն ուղղիչ գործակիցներով չափորոշիչների ուղղիչ գործակցի արժեքն ունի հաստատուն մեծություն, որը կիրառվում է տվյալ կազմակերպության յուրաքանչյուր միավորի կողմից տրված ռիսկի գնահատականների դեպքում: Օրինակ՝ նախորդ տարվա ընտրանքի արդյունքների հիման վրա կիրառվող չափորոշիչին տրված ուղղիչ գործակցի արժեքները հաստատուն են: Իսկ փոփոխուն ուղղիչ գործակիցներով չափորոշիչների մեծությունները որոշվում են ներքին աուդիտորի կողմից՝ կախված տվյալ միավորի կողմից տրված ռիսկի գնահատականներից: Սահմանելով ռիսկի չափորոշիչները՝ ներքին աուդիտորները ճշգրտում են ստացված ռիսկի գնահատման տեղեկագրերում նշված հավանականության և ազդեցության գնահատականները՝ յուրաքանչյուր չափորոշիչին տրված ուղղիչ գործակցով: Այս նպատակով չափորոշիչներից յուրաքանչյուրին տրվում է որոշակի գործակից, որն արտահայտում է միավորի կողմից տրամադրված ռիսկի գնահատականների ճշգրտման չափը: Յուրաքանչյուր գնահատվող միավորի համար ընտրված չափորոշիչների ուղղիչ գործակցի կոնկրետ չափը, կախված միավորի կողմից տրված ռիսկերի գնահատականի արժեքից, որոշվում է ներքին աուդիտորների կողմից, եթե տվյալ չափորոշիչը չի հանդիսանում հաստատուն ուղղիչ գործակից ունեցող չափորոշիչ: Չափորոշիչների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև նախորդ տարիների ընթացքում այդ ոլորտների համար տրված չափորոշիչների գործակիցները: Ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվում է 0.1 քայլով տասը նիշանոց սանդղակ՝ չափորոշիչների գործակիցների 0.5-ից 1.5 միջակայքում:

Data_IA- 07-04_008

Տվյալ		Նկարագրություն	
Ռիսկի աստիճանի որոշման միջակայքեր		Ռիսկի հավանականության և ռիսկի ազդեցության կշռված ցուցանիշները խմբավորվում են, հիմք ընդունելով հետևյալ աղյուսակի ցուցանիշները.	
N	Ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշ	Ռիսկի աստիճան	
1	3.5 և ավելին	4	
2	2.5-ից մինչ 3.5	3	
3	1.5-ից մինչ 2.5	2	
4	1.5-ից ցածր	1	

Data_IA- 07-04_009

Տվյալ		Նկարագրություն			
Ռիսկի խմբի (թվային արտահայտությամբ) որոշման մատրիցա		Ռիսկի հավանականության և ռիսկի ազդեցության կշռված և խմբավորված ցուցանիշների միջոցով Ռիսկի խմբի որոշման մատրիցա.			
Հավանակ անություն	4	5	5	5	
	3	4	5	5	
	2	3	4	5	
	1	2	3	4	
		Ազդեցություն			
		Ռիսկի խմբի որոշումը դիտարկենք հետևյալ օրինակով՝ միավորի համար ստացված ռիսկի հավանականության և ազդեցության կշռված և խմբավորված ցուցանիշները համապատասխանաբար 3 և 4 են: Տեղադրելով այս թվերը մատրիցայում՝ ստացվում է այս երկու թվերի հատման կետը, որը գտնվում է 5-րդ դաշտում: Դա հենց հանդիսանում է Ռիսկի խմբի թվային արժեքը:			

Data_IA- 07-04_010


Տվյալ	Նկարագրություն																
Ռիսկի խմբի դասակարգիչ	<p>Ռիսկի խումբը որոշվում է դրա թվային արժեքին համապատասխան՝ հետևյալ աղյուսակի միջոցով.</p> <table border="1" data-bbox="1317 261 2011 600"> <thead> <tr> <th data-bbox="1317 261 1384 354">N</th> <th data-bbox="1384 261 1771 354">Ռիսկային խումբ</th> <th data-bbox="1771 261 2011 354">Դաշտ (թվային արժեք)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="1317 354 1384 416">1</td> <td data-bbox="1384 354 1771 416">Բարձր ռիսկային</td> <td data-bbox="1771 354 2011 416">5</td> </tr> <tr> <td data-bbox="1317 416 1384 478">2</td> <td data-bbox="1384 416 1771 478">Չգայուն (նշանակալի)</td> <td data-bbox="1771 416 2011 478">4</td> </tr> <tr> <td data-bbox="1317 478 1384 541">3</td> <td data-bbox="1384 478 1771 541">Միջին</td> <td data-bbox="1771 478 2011 541">3</td> </tr> <tr> <td data-bbox="1317 541 1384 600">4</td> <td data-bbox="1384 541 1771 600">Ցածր</td> <td data-bbox="1771 541 2011 600">1 և 2</td> </tr> </tbody> </table>		N	Ռիսկային խումբ	Դաշտ (թվային արժեք)	1	Բարձր ռիսկային	5	2	Չգայուն (նշանակալի)	4	3	Միջին	3	4	Ցածր	1 և 2
N	Ռիսկային խումբ	Դաշտ (թվային արժեք)															
1	Բարձր ռիսկային	5															
2	Չգայուն (նշանակալի)	4															
3	Միջին	3															
4	Ցածր	1 և 2															

Data_IA- 07-04_011

Տվյալ	Նկարագրություն																
Աուդիտի ենթակա միավորների համամասնորեն ընտրության աղյուսակ	<p>Ռիսկի խումբը որոշվում է դրա թվային արժեքին համապատասխան՝ հետևյալ աղյուսակի միջոցով.</p> <table border="1" data-bbox="1317 860 2049 1262"> <thead> <tr> <th data-bbox="1317 860 1384 1016">N</th> <th data-bbox="1384 860 1805 1016">Ռիսկային խումբ</th> <th data-bbox="1805 860 2049 1016">Աուդիտի ենթարկվող միավորների ընտրանք</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="1317 1016 1384 1078">1</td> <td data-bbox="1384 1016 1805 1078">Բարձր ռիսկային</td> <td data-bbox="1805 1016 2049 1078">100%</td> </tr> <tr> <td data-bbox="1317 1078 1384 1141">2</td> <td data-bbox="1384 1078 1805 1141">Չգայուն (նշանակալի)</td> <td data-bbox="1805 1078 2049 1141">33%</td> </tr> <tr> <td data-bbox="1317 1141 1384 1203">3</td> <td data-bbox="1384 1141 1805 1203">Միջին ռիսկային</td> <td data-bbox="1805 1141 2049 1203">17%</td> </tr> <tr> <td data-bbox="1317 1203 1384 1262">4</td> <td data-bbox="1384 1203 1805 1262">Ցածր ռիսկային</td> <td data-bbox="1805 1203 2049 1262">5%</td> </tr> </tbody> </table>		N	Ռիսկային խումբ	Աուդիտի ենթարկվող միավորների ընտրանք	1	Բարձր ռիսկային	100%	2	Չգայուն (նշանակալի)	33%	3	Միջին ռիսկային	17%	4	Ցածր ռիսկային	5%
N	Ռիսկային խումբ	Աուդիտի ենթարկվող միավորների ընտրանք															
1	Բարձր ռիսկային	100%															
2	Չգայուն (նշանակալի)	33%															
3	Միջին ռիսկային	17%															
4	Ցածր ռիսկային	5%															

Data_IA- 07-04_012

	Տվյալ	Նկարագրություն
	Առաջնահերթությունների սահմանման մեթոդ	Գործընթացը մասնամասնորեն ներկայացված է ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ N 143-Ն հրամանով հաստատված ուղեցույցի 113-117 կետերում:
Ելքագրվող տվյալներ	Տվյալ	Նկարագրություն
Վալիդացիա		
Դիագրամ		



BP-IA-07-05 Ռազմավարական ծրագրի կազմում

Ստորաբաժանում	Ներքին աուդիտի ստորաբաժանում կամ արտապատվիրակված ծառայություն (այսուհետ՝ ներքին աուդիտ)
Անվանում	BP-IA-07-05 Ռազմավարական ծրագրի կազմում
Նպատակ	Ռիսկերի վրա հիմնված ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի կազմում
Տիրույթ	ՀՀ հանրային հատվածի կազմակերպություն
Դերակատարներ	Ներքին աուդիտի ղեկավար
Բազմընթացք	Ոչ

<p>Ընթացք</p>	<ol style="list-style-type: none"> Ներքին աուդիտի ղեկավարը որոշում է այն աշխատանքային օրերի քանակը, որն անհրաժեշտ է հաջորդ երեք տարիների ընթացքում՝ տարեկան կտրվածքով, արդեն ընտրված միավորներն աուդիտի ենթարկելու համար: Աուդիտի գործունեության համար ակնկալվող ստանդարտ ժամանակահատվածը որոշելու համար հաշվի է առնվում յուրաքանչյուր միավորի ռիսկայնության մակարդակը: Բացի ռիսկայնության գործոնից հաշվի է առնում նաև միավորի բարդությունը: Ներքին աուդիտի ռեսուրսները հաշվարկվում են յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով վերապատրաստումների ժամանակահատվածը, աշխատակիցների ամենամյա արձակուրդները, հիվանդության պատճառով բացակայությունները և այլն: Ներքին աուդիտի ղեկավարը, հիմնվելով ընդհանուր ռեսուրսների հաշվարկների վրա, որոշում է պլանավորված աշխատանքն իրականացնելու համար աուդիտորների անհրաժեշտ քանակը: Պլանավորված ընդհանուր թիվը բաժանելով ներքին աուդիտորի հասանելի օրերի թվի վրա՝ ստանում է մասնագետների այն մոտավոր քանակը, որն անհրաժեշտ է ներքին աուդիտին տվյալ աշխատանքն իրականացնելու համար: Ներքին աուդիտի ղեկավարը ձևավորում է աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբեր և գնահատում այդ խմբերի հնարավորությունները: Առաջադրանքի աշխատանքային մեկ խմբում կարող են ընդգրկվել տարբեր մասնագիտացում ունեցող աշխատակիցներ, իսկ որոշ նեղ մասնագիտացում ունեցող աուդիտորներ կարող են ընդգրկվել տարբեր առաջադրանքի աշխատանքային խմբերում: Այնուհետև, գնահատվում է պլանավորված աշխատանքների համար անհրաժեշտ ռեսուրսներն՝ ըստ առանձին մասնագետների: Ընդ որում, ռազմավարական ծրագրի կազմման ընթացքում աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբերը կազմվում են պլանավորելով յուրաքանչյուր տարվա համար անհրաժեշտ ռեսուրսները, իսկ տարեկան ծրագիրը կազմելիս ռեսուրսները հաշվարկվում են առկա անձնակազմի համար: Այսպիսի հաշվարկը հնարավորություն է տալիս աուդիտորների պահանջվող քանակը համեմատել գործող աուդիտորների քանակի հետ: Անհրաժեշտ քանակի գնահատականը ներքին աուդիտի ղեկավարին օգնում է գնահատել, թե տվյալ աշխատանքն իրականացնելու համար որքան աշխատող է անհրաժեշտ: Եթե անհրաժեշտ են լրացուցիչ աուդիտորներ, ներքին աուդիտի ղեկավարը պատասխանատվություն է կրում նրանց ներգրավման համար: Ներքին աուդիտի ղեկավարը հաշվարկում է ներքին աուդիտի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսները: Ներքին աուդիտի ղեկավարը, արդեն ընտրված միավորների հիման վրա կազմում է ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի նախագիծը: Ներքին աուդիտի ղեկավարը, ռազմավարական ծրագրի նախագիծը քննարկում և համաձայնեցնեցնում է Կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ: Ներքին աուդիտի ղեկավարը հաստատում է ռազմավարական ծրագիրը և այն ներկայացնում Կազմակերպության ղեկավարին՝ վավերացման (տվյալ Data_IA- 07-05_013): Ներքին աուդիտի ղեկավարը հաստատում է վավերացված ռազմավարական ծրագիրը մինչև տվյալ տարվա հունվարի 1-ը ներկայացնում է Լիազոր մարմին՝ ի գիտություն: 				
<p>Մուտքագրվող տվյալներ</p>	<table border="1"> <thead> <tr> <th data-bbox="409 1123 1301 1182">Տվյալ</th> <th data-bbox="1301 1123 2190 1182">Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="409 1182 1301 1246"></td> <td data-bbox="1301 1182 2190 1246"></td> </tr> </tbody> </table>	Տվյալ	Նկարագրություն		
Տվյալ	Նկարագրություն				
<p>Ելքագրվող տվյալներ</p>	<p>Data_IA- 07-05_013</p> <table border="1"> <thead> <tr> <th data-bbox="409 1310 1301 1369">Տվյալ</th> <th data-bbox="1301 1310 2190 1369">Նկարագրություն</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="409 1369 1301 1382"></td> <td data-bbox="1301 1369 2190 1382"></td> </tr> </tbody> </table>	Տվյալ	Նկարագրություն		
Տվյալ	Նկարագրություն				

Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիր


Ներքին աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ, որը սահմանում է ներքին աուդիտի կողմից իրականացվող աշխատանքները, կազմակերպությունում աուդիտի ենթակա ոլորտները, աուդիտների ժամկետները (հաճախականությունը) և հնարավորություն է տալիս կազմել աուդիտի տարեկան ծրագրեր՝ ելնելով առկա ռեսուրսներից:

Ռազմավարական ծրագիրն հիմնականում ունի հետևյալ կառուցվածքը

- 1) Ներածություն,
 - ա. հիմնական դրույթները,
 - բ. իրավական շրջանակները,
- 2) Ներքին աուդիտի առաքելությունը և խնդիրները,
- 3) ռազմավարական ծրագրի կազմման հիմքերը,
- 4) աուդիտի ենթարկվող միավորների ցանկը՝ կատարման ժամկետների և հաճախականության նշումով,
- 5) Ներքին աուդիտի կազմակերպումը և ապագա զարգացումը,
 - ա. ներքին աուդիտի ներկա կառուցվածքը և աշխատանքների կազմակերպումը,
 - բ. ներքին աուդիտի զարգացման ծրագիրը:

Վալիդացիա


Դիագրամ



BP-IA-07-06 Տարեկան ծրագրի կազմում

Ստորաբաժանում	Ներքին աուդիտի ստորաբաժանում կամ արտապատվիրակված ծառայություն (այսուհետ՝ ներքին աուդիտ)			
Անվանում	BP-IA-07-06 Տարեկան ծրագրի կազմում			
Նպատակ	Ռազմավարական ծրագրի հիման վրա տարեկան ծրագրի կազմում			
Տիրույթ	ՀՀ հանրային հատվածի կազմակերպություն, Ներքին աուդիտ, Լիազոր մարմին:			
Դերակատարներ	ՀՀ հանրային հատվածի կազմակերպության ղեկավար, Ներքին աուդիտի կոմիտե, Ներքին աուդիտի ղեկավար, Լիազոր մարմին			
Բազմընթացք	Ոչ			
Ընթացք	<ol style="list-style-type: none"> Ներքին աուդիտի ղեկավարն ուսումնասիրում է աուդիտի ռազմավարական ծրագրի հաստատումից և վավերացումից հետո Կազմակերպությունում տեղի ունեցած զարգացումներն ու փոփոխությունները, և որոշում է կայացնում ռազմավարական ծրագրում փոփոխություն և/կամ լրացում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ: Ներքին աուդիտի ղեկավարը ամսական կտրվածքով բաշխում է ծրագրում ներառված առաջադրանքները՝ բացառելով անհամապատասխանությունները ռազմավարական ծրագրի հետ: Ներքին աուդիտի ղեկավարը, հիմք ընդունելով ռազմավարական ծրագիրը, իրականացնում է աշխատակիցների և առկա այլ ռեսուրսների տեղաբաշխումը՝ նախատեսված ժամանակահատվածում՝ հաշվի առնելով ակնկալվող բացակայությունները, աշխատակիցների կազմում նախատեսվող փոփոխությունները և այլ աշխատանքները: Ներքին աուդիտի ղեկավարը հաշվարկում է յուրաքանչյուր առաջադրանքի համար անհրաժեշտ մարդ/օրերի և ուղղակի ժամանակի ծախսումները: Ներքին աուդիտի ղեկավարը հաշվարկում է չնախատեսված առաջադրանքների իրականացման հնարավորությունը: Ներքին աուդիտի ղեկավարը մշակում է առաջիկա տարվա կազմակերպության ներքին աուդիտի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ տարեկան ծրագիր): Այսուհետև այն ներկայացնում է կազմակերպության ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը: Ներքին աուդիտի ղեկավարը կազմակերպության ղեկավարից ու ներքին աուդիտի կոմիտեից ստացած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակում է տարեկան ծրագիրը (տվյալ Data_IA- 07-06_011): Ներքին աուդիտի ղեկավարը հաստատում է տարեկան ծրագիրը և ներկայացնում կազմակերպության ղեկավարին՝ վավերացման: Ներքին աուդիտի ղեկավարը հաստատված և վավերացված տարեկան ծրագիրը ներկայացնում է Լիազոր մարմին: Լիազոր մարմնի պահանջով, ցանկալի է, որ հաջորդ տարվա տարեկան ծրագիրը հաստատվի և Լիազոր մարմնին ներկայացվի մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը: 			
Մուտքագրվող տվյալներ	<table border="1" style="width: 100%; text-align: center;"> <tr> <td style="width: 50%;">Տվյալ</td> <td style="width: 50%;">Նկարագրություն</td> </tr> </table>		Տվյալ	Նկարագրություն
Տվյալ	Նկարագրություն			

Ելքագրվող տվյալներ	Data_IA- 07-06_011	
	Տվյալ	Նկարագրություն
	Ներքին աուդիտի տարեկան ծրագիր	Տարեկան ծրագիրն հիմնականում ունի հետևյալ կառուցվածքը <ol style="list-style-type: none"> 1) ներածություն, ա. ելակետային դրույթներ, բ. իրավական շրջանակները, 2) ներքին աուդիտի դերը և նշանակությունը, 3) տարեկան ծրագրի պլանավորումը և հաստատումը, 4) ընտրված աուդիտորական առաջադրանքների ցանկը, ա. աուդիտի ենթարկվող միավորների ցանկը, բ. աուդիտի առաջադրանքի նպատակները, շրջանակները և աուդիտի տեսակը. գ. ռեսուրսների առկայությունը, 5) ներքին աուդիտի ռեսուրսների հաշվարկը, 6) ներքին աուդիտի հետ փոխկապակցված գործունեության տեսակները, ա. շարունակական մասնագիտական վերապատրաստում, բ. ներքին աուդիտի կոմիտեի նիստերին մասնակցությունը, գ. ներքին աուդիտի մասին սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը, 7) ներքին աուդիտի աշխատանքների կազմակերպումը, ա. ներքին աուդիտի կազմակերպական կառուցվածքը 8) հաշվետվությունները, ա. ներքին աուդիտի գործունեության տարեկան հաշվետվությունը, բ. ներքին աուդիտի պարբերական հաշվետվությունները, գ. Լիազոր մարմնին ներկայացվող հաշվետվությունը:
Վալիդացիա		
Դիագրամ		

